ՏԱՐԵԿԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ
2024

Սիլիհտարի պարտեզներ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Դրամաշնորհի մրցույթներ
- Հրապարակումներ
- Կանանց կազմակերպությունների կարողությունների զարգացում
- Տեսահոլովակներ
- Գործընկերուհիների հետ հանդիպումներ
- Միջազգային այցեր
- Հարցազրույցներ և հոդվածներ
- Դասընթացներ գործընկերուհիների համար
- Նորություններ Ֆեմպատում ծրագրից
- Մասնակցություն New Democracy Fund-ի ֆորումին

Դրամաշնորհի մրցույթներ

2024 թվականին հայտարարել ենք 7 դրամաշնորհային հնարավորությունների մասին, որը գրեթե կրկնակի է նախորդ տարվա համեմատ: Ունեցել ենք ինչպես «ավանդական» ուղղություններ, այնպես էլ ավելացրել ենք նոր թեմաներ ու դրամաշնորհային ուղղություններ՝ լայնացնելով մեր գործունեության ազդեցության գոտիները: Առավել մանրամասն յուրաքանչյուրի մասին՝ ստորև:

1. Միջմարզային համագործակցության դրամաշնորհի նպատակն էր համախմբել 2-3 մարզային կանանց և ֆեմինիստական խմբեր և/կամ կազմակերպություններ, որոնք միասին կարող են փոփոխություններ բերել իրենց համայնքների կանանց կյանքում և, ինչու ոչ, նաև համայնքներում: Դրամաշնորհի արդյունքում ընտրվել է 6 նախաձեռնություն:

2. «Կանանց իրավունքների օր՝ ամեն օր» դրամաշնորհի նպատակն էր աջակցել մարտի 8-ի ֆեմինիստական միջոցառումների իրականացմանը՝ հնարավորություն տալով իրագործելու այդ օրվա հետ կապված գաղափարներն ու պլանները: Արդյունքում իրականացվել է 8 նախաձեռնություն:

3. «Կանայք, խաղաղություն, անվտանգություն» դրամաշնորհի նպատակն էր ընդլայնել կանանց կազմակերպությունների, ֆեմինիստական ոչ ֆորմալ խմբերի, ակտիվիստների, լրագրողների, հետազոտողների և արվեստագետների ջանքերը՝ ուղղված խաղաղությանը, կոնֆլիկտի փոխակերպմանը և անվտանգությանը՝ ինտերսեկցիոնալ և գենդերազգայուն դիտանկյուններից:

4. Կլիմայի ազդեցությունը կանանց վրա դրամաշնորհն ուղղված էր էկոլոգիական խնդիրների և կանանց վրա դրանց ազդեցության սահմանների ուսումնասիրություններին՝ առնչվող թեմաներին ֆեմինիստական տեսանկյունից արձագանքելու նպատակով:

5. Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օրվան (Հոկտ. 1) նվիրված ֆեմինիստական միջոցառումներին ուղղված դրամաշնորհի նպատակն էր ընտանեկան բռնության խնդրի բարձրաձայնումը, հաղթահարումն ու կանխարգելումը, խնդրին գենդերային տարբեր կողմերի անդրադարձը, համակարգայնորեն անտեսվող խմբերի ձայնի լսելիության բարձրաձայնումը ընտանեկան բռնության համատեքստում, ինչպես նաև հայրիշխանական կառույցներին մարտահրավերներ նետելը:

6. Դեռահասների դրամաշնորհը հնարավորություն է տալիս դեռահասներին՝ իրագործելու իրենց գաղափարները և իրականություն դարձնելու նպատակները: Դրամաշնորհը դեռահաս աղջիկների համար էր և ուղղված էր դեռահաս աղջիկների խնդիրներին ու դրանց արձագանքմանը:

7. Գենդերային բռնության դեմ պայքարի 16-օրյակի միջոցառումներին նվիրված դրամաշնորհը ենթադրում էր ֆեմինիստական հավաքներ և ամենատարբեր միջոցառումներ ու գործողություններ՝ նվիրված տարբեր ֆեմինիստական նպատակներին, համայնքային հզորացմանը, ինչպես նաև մոտիվացնող փոփոխություններին:

Հրապարակումներ



Կոլեկտիվ հոգատարության մոտեցումը գործընկերների շրջանում

Հունիսին հրապարակեցինք Կոլեկտիվ խնամքի մոտեցմանն ուղղված ուսումնասիրություն, որը նպատակ ունի հասկանալու կոլեկտիվ խնամքի կարևորությունը գործընկերային հարաբերություններում, դուրս հանելու գործընկերների շրջանում առավել տարածված պրակտիկաները, մարտահրավերները և հնարավորությունները՝ կոլեկտիվ խնամքի մոտեցումների հետագա ինտեգրման համար:

Վերասահմանելով ուժն ու սոլիդարությունը. ֆեմինիստական ոսպնյակի ներքո

«Վերասահմանելով ուժն ու սոլիդարությունը. ֆեմինիստական ոսպնյակի ներքո» հոդվածների ժողովածուն իր մեջ է մեկտեղել աշխարհի տարբեր մասերից ֆեմինիստական սոլիդարության պատմություններ՝ Հայաստանից մինչև Սուդան, Վրաստան, Ուկրաինա, Պաղեստին և այլուր: Այն ճգնաժամային ժամանակներում ֆեմինիստական ուժի ու դիմադրության, արագ արձագանքի ու միմյանց օգնելու, պայքարը կիսելու և երբեք չհանձնվելու մասին է:

Անցած 5 տարիների հրապարակումների ամփոփում



2018-2024 ՀԿՀ հրապարակումներ

Գործունեության հինգ տարիների ընթացքում Կանանց հիմնադրամը գրեթե մեկ տասնյակ հետազոտություններ է իրականացրել ու ժողովածուներ հրապարակել՝ անդրադառնալով այնպիսի թեմաների, որոնք մեր հետաքրքրությունների ու մտահոգությունների շրջանակներում են, կարևոր են ֆեմինիստական շարժման առաջընթացի և նոր նարատիվների ձևավորման համար: Այս հոդվածում հավաքել ենք այդ բոլոր նյութերն ու զեկույցները:

Կանանց կազմակերպությունների կարողությունների զարգացում

Նոյեմբերին և դեկտեմբերին իրականացրել ենք 15 հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացմանն ուղղված աշխատարանների շարքը, որի շրջանակում արել ենք 8 առցանց դասընթաց կազմակերպել հետևյալ թեմաներով.

- Հասարակական կազմակերպությունների ռազմավարական պլանավորում
- Սոցիալական ներառականություն
- Գենդերային վերլուծություն և գենդերային զգայուն բյուջետավորում
- Ուղենշային [ռազմավարական] հաղորդակցություն
- Ֆեմինիստական ադվոկացիա
- Թվային անվտանգություն
- Ֆինանսական մոդելավորում և կայունություն

Ծրագրի արդյունքում ընտրված 4 հասարակական կազմակերպություն, որոնք աշխատում են առավել խոցելի համայնքների հետ, ֆինանսական աջակցություն են ստացել՝ զարգացնելու իրենց ինստիտուցիոնալ ճկունությունը և կարողությունները ճգնաժամային իրավիճակներում մարգինալացված խմբերի հետ աշխատելիս:

Տեսահոլովակներ

Տարվա ընթացքում երկու տեսանյութերի միջոցով անդրադարձել ենք կոլեկտիվ հոգատարության կոնցեպտին:

Կոլեկտիվ հոգատարության մեր մոդելը

Մենք հավատում ենք, որ հավաքական հոգատարությունը, կանանց խմբերի միջև կապն ու աջակցությունը անհատի բարօրության կարևոր մասն է: Կոլեկտիվ ամոքմանն ու բարօրությանն ուղղված աշխատանքը Հայաստանում կանանց հիմնադրամի կարևոր ուղղություններից մեկն է: Այս տեսանյութում պատմում ենք կոլեկտիվ հոգատարության մեր մոդելի մասին:

Սիլիհտարի պարտեզները . ամոքման մեր կենտրոնը

Ակտիվ կերպով շարունակում են ընթանալ նաև մեր ամոքման տարածքի՝ Սիլիհտարի պարտեզների վերանորոգման աշխատանքները: Իսկ մինչ հնարավորություն կունենանք մեր ինքնախնամքին և կոլեկտիվ խնամքին ուղղված հանդիպումները այնտեղ կազմակերպելու, առաջարկում ենք ծանոթանալ կենտրոնի կոնցեպտին ու առանձնահատկություններին այս տեսանյութում:

Միջոցառումներ

Քարտեզագրելով կանանց իրավունքները

Մարտի 7-ին տեղի ունեցավ «Քարտեզագրելով կանանց իրավունքները» խորագրով միջոցառումը, որի ընթացքում ներկայացվեցին դեռևս նախորդ տարի մեկնարկած երեք թեմաներով քարտեզները Երևանի կին ճարտարապետների աշխատանքների, կին սթրիթ արտիստների պատումների, հանրային ու մասնավոր տարածքներում կանանց ու սուրճի մասին: Քարտեզները ստեղծվել են բանավոր պատմությունների հավաքագրման միջոցով՝ Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ:

Կլիմայի փոփոխության ազդեցությունը կանանց վրա

Ապրիլի 18-ին առցանց քննարկում ունեցանք՝ նվիրված կլիմայի փոփոխության ազդեցության կանանց ու աղջիկների վրա Հայաստանում: Հրավիրված խոսնակը բնապահպան ակտիվիստ Անի Խաչատրյանն էր, որը կիսվեց որպես կին իր ակտիվիստական փորձառությամբ, հանդիպած մարտահրավերներով: Հանդիպումը ՀԿՀ գործընկեր(ուհի)ների համար էր՝ միասին քննարկելու մեզ մոտ առկա բնապահպանական խնդիրները և հատկապես դրանց բազմաչափ ազդեցությունը կանանց վրա: Հետագայում ևս կունենանք այս թեմայի շուրջ այլ հանդիպումներ ու քննարկումներ:

Սնունդ և ֆեմինիզմ. վեբինար

Մայիսի 7-ին կազմակերպել էինք «Սնունդ և ֆեմինիզմ» խորագրով վեբինարը, որի ընթացքում որպես խոսնակներ ելույթ ունեցան տարբեր երկրներից հրավիրված ֆեմինիստ ակտիվիստներ՝ կիսվելով իրենց փորձով, պատմելով իրենց փորձառությունների, սննդի հետ կապված մշակութային առանձնահատկությունների մասին: Այս թեման մեր ուշադրությանն է արժանացել այն պարզ պատճառով, որ այն ընդգծում է այն բարդ ուղիները, որոնցով գենդերային նորմերը, ուժային դինամիկան և սոցիալական անհավասարությունները ձևավորում են մեր հարաբերությունները սննդի և սննդի համակարգերի հետ:

Գործընկերուհիների հետ հանդիպումներ

Մայիս

Մայիսի 2-ին ՀՖՀ-ն իր գրասենյակում կազմակերպել էր հանդիպում գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչների և անհատ գործընկերների հետ: Հանդիպման նպատակն էր վեր հանել և քննարկել կանանց կազմակերպությունների և ակտիվիստների առջև ծառացած մարտահրավերները:

Հունիս

Հուլիս ամսվա ընթացքում ունեցանք մի քանի հանդիպումներ տարբեր խմբերի գործընկերուհիների հետ: Այդ հանդիպումներից էր նաև մեր տարեկան հավաքը 40-անց կանանց ծրագրեր իրականացնող գործընկերուհիների հետ: Այս անգամ փորձել էինք ընդլայնել հանդիպման մասնակիցների շրջանակը: Դրան մասնակցում էին ոչ միայն գործընկերուհիները տարբեր մարզերից, այլև ծրագրերի շրջանակներում մասնակից կանայք տարբեր համայնքներից:

Հանդիպում դեռահասների հետ

Հունիսի 15-ին դեռահասների հետ կայացած հանդիպման ընթացքում քննարկեցինք իրականացվող ծրագրերը, խոսեցինք ֆեմինիստական շարժման դրսևորումների ու աղջիկներին անհանգստացնող թեմաների մասին, այցելեցինք Ֆեմգրադարան, ծանոթացանք վերջինիս գործունեությանն ու շարունակեցինք մեր քննարկումը սահմաններ դնելու ու ինքներս մեզ պաշտպանելու մասին:

Հանդիպում դեռահասների խմբի հետ

Միջազգային այցեր

Ադվոկացիոն հանդիպումներ Եվրոպայի խորհուրդում

Որպես Պրոսպերա կանանց հիմնադրամների միջազգային ցանցի անդամ՝ հանդիպումներ ունեցանք մեր գործընկեր կազմակերպությունների հետ Բելգրադում և Բրյուսելում, մասնակցեցինք ցանցի եվրոպական մասի մի շարք ադվոկացիոն ռազմավարական հանդիպումներին Եվրոպական հանձնաժողովի տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների հետ:

Հանդիպումներ՝ նվիրված մասնակցային դրամաշնորհների զարգացմանը

Վերջին երկու տարիներին Հայաստանում կանանց հիմնադրամը Պրոսպերա ցանցի մի քանի քույր հիմնադրամների հետ ներգրավվել է կանանց հիմնադրամներում մասնակցային դրամաշնորհների (PGM) զարգացմանն ուղղված համատեղ նախաձեռնությունում, որի շրջանակում 2024թ. երկու հանդիպում ենք ունեցել Թբիլիսիում և Բանգկոկում: Հանդիպումների ընթացքում ուսումնասիրել ենք մասնակցային դրամաշնորհներ տրամադրելու մոտեցումը և մտքեր փոխանակել ֆիլանթրոպիայի, իշխանության, գործընկերության և շարժման մասին:

Սեսիաների ընթացքում հիմնականում քննարկվել են դրամաշնորհների տրամադրման գործընթացներում ուժի դինամիկային, տարբեր շահագրգիռ կողմերի հետ հարաբերություններին և այլ թեմաներին առնչվող հարցեր: Ինչպես նաև քննարկել ենք, թե արդյոք ֆեմինիստական ֆիլանթրոպիան կարող է գոյություն ունենալ առանց մասնակցային դրամաշնորհների տրամադրման և պատկերացրել ֆեմինիստական ֆիլանթրոպիայի և դրամաշնորհների տրամադրման ապագան: Դեկտեմբերին Բանգկոկում կայացած հանդիպմանը մասնակցել են նաև Հիմնադրամի գործընկերները՝ Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի և Կանանց հզորացման ռեսուրս կենտրոնի ներկայացուցիչները:

Հանդիպումներ «Ճիշտ ուղու վրա» նախաձեռնության շրջանակներում

Հայաստանում կանանց հիմնադրամը 2020թ.-ից «Ճիշտ ուղու վրա» ծրագրի մաս է կազմում, որի նպատակն է ամրապնդել ֆեմինիստական, ԼԳԲՏԻՔ+ շարժումների համագործակցությունը կանանց հիմնադրամների միջև՝ պաշտպանելու ազատության, ժողովրդավարության և բազմազանության արժեքները ֆունդամենտալիզմից և ծայրահեղ աջական խմբերի հարձակումներից:

Այս տարի նախաձեռնության շրջանակներում ապրիլին՝ Բելգրադում, իսկ սեպտեմբերին՝ Մադրիդում հանդիպումներ ունեցանք՝ քննարկելու նախաձեռնության տեսլականը և նպատակները, մշակելու 2025-2029թթ. համատեղ ռազմավարությունը:

Այցելություն Վարշավա՝ ամոքման, դիմակայանության բարձրացման և նոր համագործակցությունների նպատակով

Նոյեմբերի 12-15-ն ընկած ժամանակահատվածում Կանանց հիմնադրամի թիմի անդամներն ու մի քանի գործընկերուհիներ մասնակցեցին ֆիլիա

կանանց հիմնադրամի կողմից կազմակերպված դիմակայունության հանդիպմանը Վարշավայում: Այս հանդիպմանը ներկա էին Հայաստանի, Վրաստանի, Ուկրաինայի և Գերմանիայի կանանց հիմնադրամներն ու գործընկերուհիները: Հանդիպման մասին առավել մանրամասն՝ այստեղ:

Մասնակցություն AWID միջազգային 15-րդ համաժողովին

Դեկտեմբերի 2-5-ին Հիմնադրամի համահիմնադիրները Բանգկոկում մասնակցել են AWID միջազգային 15-րդ համաժողովին, որը համախմբել էր ավելի քան 4000 ակտիվիստների, ֆեմինիստների և դոնորների: Բացի այդ, դեկտեմբերի 1-ին Հիմնադրամի համահիմնադիր Գոհար Շահնազարյանը մասնակցել է Moving Money, Building Movements Convention-ին, որը կազմակերպվել էր Alliance for Feminist Movements-ի, AWID-ի, Count Me In! Consortium-ի, Gender Funders CoLab-ի և Պրոսպերա Կանանց հիմնադրամների միջազգային ցանցի համատեղ նախաձեռնությամբ: Հանդիպման ընթացքում քննարկվել են շարժումների կարևորագույն մարտահրավերներն ու հնարավորությունները և համապատասխան ֆինանսավորման ռազմավարությունները, մեխանիզմներն ու մոտեցումները: Այս փակ միջոցառմանը ակտիվիստների կողքին ներկա էին ֆինանսավորողների բազմազան շրջանակ, երկկողմ և բազմակողմ հաստատություններ և ֆեմինիստական հիմնադրամներ:

Մասնակցություն Human Rights Funder Network-ի համաժողովին

Մարդու իրավունքների ֆինանսավորող ցանցի (HRFN) համաժողովին, որը տեղի է ունեցել 2024 թվականի ապրիլին Թբիլիսիում, բացման պանելում ելույթ է ունեցել ՀԿՀ-ի համահիմնադիր Լարա Ահարոնյանը: Իսկ Գոհար Շահնազարյանը՝ հիմնադրամի մյուս համահիմնադիրը, բանախոս էր «Արևմտյան Բալկաններում և Հարավային Կովկասում ֆեմինիստական կոլեկտիվ խնամքի և անվտանգության ենթակառուցվածքների ռեսուրսներ» պանելային քննարկմանը , որը կազմակերպել էր Urgent Action Fund Beyond Survival հիմնադրամը: Քննարկման շրջանակում Գոհարը կիսվել է կոլեկտիվ խնամքի պրակտիկաներով, որոնք ՀԿՀ-ն կիրառել էր պատերազմի և 2023 թվականին Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի տեղահանման պայմաններում:

Հոկտեմբերին նաև մասնակցել ենք Համբուրգում տեղի ունեցած Պրոսպերայի եվրոպական մասնաճյուղի տարեկան ժողովին, որը հյուրընկալվել էր ֆիլիա հիմնադրամի կողմից:

Հարցազրույցներ ու հոդվածներ

Տարվա ընթացքում մի շարք հարցազրույցներ ենք անցկացրել մեր գործընկերուհիների հետ և հոդվածներ հրապարակել տարատեսակ թեմաներով՝ գիտությունից մինչև ֆեմինիստական ֆիլանթրոպիա, պատերազմից մինչև ԼԳԲՏԻՔ+ հիմնահարցեր: Ձեզ ենք ներկայացնում դրանք՝ ակտիվ հղումներով.

- Գիտությունը որպես պայքար գենդերային անհավասարության դեմ. Անուշ Մարգարյանի փորձը
- «Կանանց ապահով տարածքները կնպաստեն բռնի տեղահանված կանանց ինտեգրմանը հասարակությունում». Նարե Հայրապետյան
- Լինել դեռահաս այս խառնակ աշխարհում
- Փոքր սրճարաններում աշխատելուց մինչև ֆեմինիստական ֆիլանթրոպիա. փոխակերպիչ մոտեցում՝ հիմնված համերաշխության և հոգատարության վրա
- 2024 թվականի դեռահաս աղջիկների ծրագրերի ֆինանսավորման մասին
- Պատերազմի գինը. մարտահրավերները Հայաստանում
- «Պետք է շարունակենք մեր պայքարը, քանի կա թեկուզ շատ փոքր հնարավորություն». Դիանա Ղզրոյան

Դասընթացներ գործընկերուհիների համար

Փորձելով բարձրացնել մեր գործընկերուհիների իրազեկվածությունը՝ կազմակերպել ենք դասընթացներ տարբեր թեմաների շուրջ:
Այսպես, փետրվարի 20-ին ՀԿՀ-ն առցանց հանդիպում էր կազմակերպել Հիմնադրամի հաշվապահի հետ: Նպատակն էր զարգացնել մեր գործընկեր կազմակերպությունների հաշվապահների հմտությունները և ծանոթացնել ՀՀ օրենսդրական դաշտի նոր փոփոխություններին:

Իսկ հունիսին կազմակերպել էինք տեղեկատվական սեմինար մեր գործընկեր կազմակերպությունների և անհատների համար: Աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին ՄԻԱՎ-ի ոլորտում առաջընթացները Հայաստանում և աշխարհում, ինչպես նաև թմրամիջոցներ օգտագործողների վիճակը և վնասի նվազեցման ծրագրերը Հայաստանում: Սեմինարն անցկացրեց Ժենյա Մայիլյանը Իրական աշխարհ, իրական մարդիկ ՀԿ-ից:

Նորություններ Ֆեմպատում ծրագրից

«Ֆեմպատում. ֆեմինիստական պատմությունների արխիվ» ծրագրի շրջանակում հարցազրուցավարները շարունակում են նոր պատմություններ հավաքագրել: Առաջիկայում նաև նախատեսում ենք խմբային ընթերցանություններ կազմակերպել՝ ներգրավելով ոչ միայն ծրագրի մասնակիցներին, այլ նաև հետաքրքրվող անձանց:

Մասնակցություն New Democracy Fund-ի ֆորումին

Հուլիսի 1-ին տեղի ունեցավ Ժողովրդավարության հայկական երրորդ ֆորումը՝ կազմակերպված Freedom House-ի հայաստանյան գրասենյակի և Իրազեկ քաղաքացիների միավորում հկ-ի կողմից: Ֆորումի թեման էր՝ «Ժողովրդավարության դիմադրողականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը ճգնաժամի պայմաններում»: Պանելային քննարկումներից մեկին՝ «Ժողովրդավարությունն ընդդեմ անվտանգության. մարտահրավեր նետելով կեղծ երկատմանը», մասնակցեց նաև ՀԿՀ համահիմնադիր Գոհար Շահնազարյանը: Նրա ելույթը նվիրված էր ժողովրդավարության ու անվտանգության նարատիվներում կանանց հարցերի շահարկմանը և թեմաների գենդերային ասպեկտին:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԿԱՆԱՆՑ
ՀԻՄՆԱԴՐԱՄ